ԼՈՒԿԻՈՍ ՎԵՐՈՍԻ ՕՐՈՔ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԹՈՂԱՐԿՎԱԾ ՊՂՆՁԵ ԴՐԱՄՆԵՐ*

ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

1978 թ. Զ. Պտուկյանը հրատարակեց պղնձե մի դրամ, որը նա ձեռք էր բերել, իր խոսքերով, վերջերս[1]*: Դրամի դիմերեսի տիպը ներկայացնում է զույգ դիմապատկեր հայկական թագով արքայի և, հետին պլանում, թագուհու կիսադեմը դեպի աջ: Նկատելի են շրջանաձև հունարեն գրության հետքեր: Դարձերեսին պատկերված է երկու սրածայր գագաթներով սար, որից վեր երևում է գրության աջ հատվածը՝ ...ICAP, իսկ ներքևում A տառը: Հեղինակը գրում է, որ սարն իր ձևով հիշեցնում է Կապադովկիայի Արդեոս լեռը: Նշելով, որ առայժմ հնարավոր չէ որոշել այդ դրամի պատկանելությունը, Զ. Պտուկյանը ենթադրում է, որ այն կարող է թողարկված լինել Տիգրան II-ի կողմից, երբ մ.թ.ա. 93 թ. գրավելով Կապադովկիան, նա Արիոբարզան I-ին հարկադրեց թողնել իր թագավորությունը և փախչել Հռոմ: Կատալոգում դրամը հարցականով վերագրված է Կեսարիա քաղաքի դրամահատարանին:*

Այս տիպի գրամների պատկանելության և թվագրման վերաբերյալ մեկ այլ տեսակետ հայտնվել է Classical Numismatic group *(այսուհետև՝* CNG*) 36 № 637 դրամին նվիրված մեկնաբանության մեջ, որտեղ հեղինակը ակնարկում է Կոմմագենեի արքա Միհրդատ I-ին և թագուհի Լաոդիկեին (շուրջ 96 – 70 թթ. մ.թ.ա.): Այդուհանդերձ, առանց լրացուցիչ բացատրության, դրամն այստեղ թվագրված է մ.թ.ա. 1 դ. կեսով: Միևնույն ժամանակ, վերջում նշված է, որ հարցը մնում է բաց*[2]*:*

Այս դրամի մասին մինչև վերջերս հայտնի էր միայն այսքանը, քանի որ այդ ընթացքում հայտնի դարձած մի քանի մաշված ու վատ պահպանված օրինակների վրա գրությունները մնում էին անընթեռնելի:

Հարցը նոր ընթացք ստացավ այն բանից հետո, երբ 2001 թ. հայտնի դարձավ ևս մեկ օրինակ այդ թողարկումից, հայտնաբերված հին Արտաշատում, որը թեև դեռ թույլ չի տալիս ունենալ դիմերեսի պատկերագրական մանրամասնությունների և գրության լրիվ նկարագրությունը, բայց հնարավորություն է ընձեռում ամբողջացնել դարձերեսի գրությունը և

---

* *Հոդվածի հակիրճ տարբերակը զեկուցվել է 2003 թ. սեպտեմբերին Մադրիդում կայացած XIII Միջազգային դրամագիտական կոնգրեսում: Կոնգրեսին մասնակցելու խնդրում ցուցաբերած ֆինանսական օժանդակության համար մեր երախտագիտությունն ենք հայտնում Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամին և* Commission Internationale de Numismatique*-ին:*

[1] P. Z. B e d o u k i a n. Coinage of the Artaxiads of Armenia. London, 1978, № 128, p. 24, pl. 6.

[2] Classical Numismatic Group, Auction 36, December 5 & 6, 1995, p. 60, № 637.

հնարավոր դարձնում խոսել դրամի ստույգ թվագրման, պատկանելության և թողարկման հանգամանքների մասին (նկ. 1, մեծացված – նկ. 2.10):

Ներկայումս մեզ հայտնի է 10 օրինակ (նկ. 2.1-10), ներառյալ Հայաստանի պատմության թանգարանի կողմից 2002 թ. ձեռք բերված վերոհիշյալ դրամը:

Դրամի նկարագրությունը.

Դիմերես. Արքայի գլուխը աջ, անմորուս, հայկական թագով՝ գագաթին հինգ ելուստներով և վզկալով: Թագի ստորին եզրով կապված ասպարոշը պատկերված է երկու գծով, ծոծրակին երևում են փոքրիկ վարդակապը և ասպարոշի ծայրերը՝ երկու ալիքավոր գծիկների տեսքով: Երևում է արքայի ականջի բլթակը: Դիմապատկերը ներքևում ավարտվում է գգեստի օձիքի պատկերմամբ:

Երկրորդ պլանում, արքայի դեմքից աջ, երևում է երկրորդ կիսադեմը, որի նուրբ դիմագծերը հուշում են, որ պատկերվածը կին է՝ թագուհի: Երևում են ճակատի վրա կախված մազափունջը և մազերն օղակող ժապավենի մի փոքրիկ հատվածը:

Շրջանաձև տեղադրված հունարեն գրությունից նշմարվում են մի քանի տառերի ստորին ծայրերը՝ արքայի գլխի հետևում, և երեք տառ՝ ΚΞΡ, ΚΕΡ *կամ* ΚΕΒ (?), *թագուհու գլխավերևում:*

Դարձերես. Երկու կոնաձև, միմյանց կից, զառիթավ լանջերով ու սրածայր գագաթներով սարեր, աջ կողմինը մյուսից ավելի բարձր: Սարերի վրա ընդգծված են լեռնային ձորերը և լեռնաթմբերը, իսկ բարձր սարի վրա՝ նաև ձյունածածկ գագաթի սահմանը: Սարերի ստորոտում երևում է երեք փոքր սարերի կամ բլուրների շղթա, որոնցից մեջտեղինը՝ մի փոքր ներս ընկած, իսկ աջ կողմինը՝ մյուս երկուսից ավելի բարձր: Սարերից վեր, կիսաշրջանաձև դասավորությամբ հունարեն գրությունը սկսվում է փոքը սարի ձախ լանջի մոտից՝ ΛΛΟΚΑΙΣΑΡ: *Սարերից ցած, կենտրոնում* Α *տառը: Կետավոր շրջանակ:*

Դրամների ցուցակը (նկ. 2)

	Կշիռը /գ	*Տրամ./մմ*	*Առանցք. հարաբ./ժամ*
1.	*8.88*	*21*	
	CNG 36 (1995), № 637 = Armenian Coins & Books Bulletin.19 (1998), № 38.		
2.	*4.86*	*19*	
	CNG 51 (1999), № 798		
3.	*4.7*		
	P. Z. Bedoukian. Coinage of the Artaxiads of Armenia, London, 1978, № 128		
4.	*4.50*	*19.1*	*11*
	Հայաստանի պատմության թանգարան (այսուհետև՝ ՀՊԹ) 18799/5, Գ. Մաղլումյանից նվեր (1977)		
5.	*4.45*	*19.7*	*12*
	ՀՊԹ 19648/37, Ա. Այվազյանից նվեր (1989)		
6.	*4.42*	*21.1*	*11*

		Ա. Այվազյանի ժողովածու	
7.	4.31	17	
		CNG 46 (1998), № 701	
8.	4.01	18.3	11
		Ա. Այվազյանի ժողովածու	
9.	3.91	17	
		Y. T. Nercessian. Armenian Coins and Their Values, Los Angeles, 1995, № 122 = CNG 36 (1995), № 638	
10	3.91	18.6	11
		ՀՊԹ 19992/78, Գ. Մաթևոսյանից գնված (2002)	

Դրամները միջին հաշվով 4 գրամից ավելի և մոտավորապես 19 մմ տրամագծով թողարկումներ են: Բացառություն է կազմում միայն № 1-ը, որի կշիռը մյուսների միջին կշռի կրկնակին է: Առայժմ, սակայն, վաղ է այս թողարկման մեջ երկու տարբեր արժեչափերի մասին խոսելը:



Նկ. 1

Նորահայտ դրամի (նկ. 1 և նկ. 2.10) դարձերեսի գրության մեջ աներկբայորեն ընթերցվող KAICAP բառը ցույց է տալիս, որ այս թողարկումը կարող էր ի հայտ գալ մ.թ.ա. 27 թ. ոչ շուտ, երբ Գայոս Հուլիոս Օկտավիանոսը պաշտոնապես վերանվանվեց Կեսար Օգոստոս կայսր, և որից սկսած Կեսար անձնանունը վերածվելով տիտղոսի՝ դարձավ Հռոմի կայսրերի պաշտոնական անվան պարտադիր բաղադրիչը: Ուստի միայն այս փաստով իսկ բացառվում է դրամները Տիգրան II-ին կամ Կոմմագենեի Միհրդատ I-ին վերագրելու հնարավորությունը և դրանց վաղ թվագրումը:

Կան նաև երկու ոչ ուղղակի, բայց բավական ծանրակշիռ փաստարկներ, որոնք, եթե անգամ չլիներ վերոհիշյալ փաստը, վկայում են դրամները հելլենիստական ժամանակաշրջանով (այս հասկացության ընդունված սահմաններում) թվագրման դեմ: Հելլենիստական դրամական պատկերագրության մեջ չենք հանդիպի պատմական որևէ կոնկրետ իրադարձություն, աշխարհագրական վայր կամ ճարտարապետական որոշակի կառույց պատկերող դրամական տիպ: Պատմաքաղաքական որևէ կարևոր իրադարձության առիթով թողարկվող դրամների վրա հելլենիստական արքաներն այդ մասին հիշատակել էին տալիս այլաբանորեն՝ դիցաբանական

կերպարների և խորհրդանշանների միջոցով: Տիգրան Մեծի դրամական պատկերագրությունն ամբողջովին հելլենիստական ոգու և ավանդույթի սահմաններում էր: Հռոմեական դրամական պատկերագրությունն իրական պատկերներ սկսում է «արձանագրել» (թե՛ համապետական և թե՛ պրովինցիալ թողարկումներում) հանրապետության վերջին տասնամյակներից, բայց հաակապես՝ Օգոստոս կայսեր ժամանակներից սկսած: Այս կոնտեքստում միանգամայն հնարավոր ու հասկանալի է դառնում որևէ, այդ թվում նաև՝ արքայական թողարկման համար սարը որպես դրամասիպ ընտրելու հանգամանքը:

Երկրորդ վաստարկն այն է, որ շրջանաձև դասավորությամբ գրությունը, որն առկա է դրամի դիմերեսին, նույնպես հռոմեական պատկերագրական հաականիշ է՝ մ.թ.ա. 34–31 թթ. սկիզբ առած[3]:

Այսպիսով, այս դրամների թողարկման ժամանակը և դրանք թողարկող արքային պետք է վնարել Օգոստոս կայսեր իշխանության տարիներից սկսած: Դիմերեսի պատկերատիպը և գրությունը, այն վիճակում, ինչպիսին դրանք հայտնի են մեզ ծանոթ դրամների տվյալներով, շատ էլ խոսուն չեն, որովհետև թերի են: Եթե գրությունն ամբողջովին ընթեռնելի լիներ, կարող էինք իմանալ արքայի, գուցե նաև թագուհու, անունները: Այդ կարևոր տվյալից առայժմ զրկված լինելով, տեսնենք, թե ինչով կարող է մեզ օգնել հիմա արդեն ամբողջությամբ ընթերցվող դարձերեսի գրությունը:

Մեր ցուցակի №10 դրամի շնորհիվ այժմ ունենք դարձերեսի ΛΛΟΚΑΙCΑΡ գրությունը: ΚΑΙCΑΡ բառը մեզ հուշում է, որ առաջին երեք տառերը այլ բան լինել չեն կարող, քան Հռոմի կայսեր անվան սկզբնատառերը: Սակայն ΛΛΟ տառերը հնարավոր չէ վերծանել, եթե մի վայրկիկ շտկում չկատարենք դրանցում: Իսկ այդ շտկման անհրաժեշտությունը պարզ դարձավ այս դրամի և հունատառ հռոմեական դրամների գրություններում տառաձևերի ուշադիր զննումից, ինչպես նաև բոլոր կայսրերի հունարեն դրամական գրություններն աչքի անցկացնելուց հետո: ΚΑΙCΑΡ բառի առաջին ալֆան (Α) գրված է այնպես, որ երևում է որպես լամդա (Λ): Այսինքն, կա՛մ սուր անկյուն կազմող երկու թեք գծիկների միջև հորիզոնական գծիկը բացակայել է ի սկզբանե, կա՛մ այնքան թույլ է արտահայտված եղել, որ դրամի պահպանվածության այս վիճակում այլևս չի նշմարվում: Երկրորդ ալֆայի հորիզոնական գծիկը, թեև տառն ամբողջությամբ չի դրոշմվել հատաձուլի վրա, այնուամենայնիվ, երևում է: Ոչ շատ հստակ, բայց երևում է նաև էքզերգում գտնվող միայնակ ալֆայի հորիզոնական գծիկը՝ Հելլենիստական դրամների վրա կարելի է հանդիպել ալֆայի գրության տարբեր ձևեր՝ Α, Ᾰ, Ᾰ, Ᾰ, ինչպես նաև կարելի է հիշատակել հարյուրավոր օրինակներ՝ թե՛ հելլենիստական, թե՛ կայսերական դրամների վրա, որտեղ ալֆան գրված է առանց հորիզո-

[3] Р. В. Варданян. К вопросу о датировке двух групп армянских монет эллинистической эпохи.— "Историко-филологический журнал", 1987, №2, с. 203—204.



Նկ. 2

նական գծիկի[4]*: Ընդ որում, նույն դրամի վրա կարելի է հանդիպել ալֆա տառը և՛ կանոնավոր գրությամբ, և՛ առանց հորիզոնական գծիկի՝ լամդայի տեսքով այնպես, ինչպես մեր դրամի վրա է: Ալֆա տառի գրության այս առանձնահատկությունը նկատի ունենալով, անդրադառնանք մեր բուն խնդրին:* ΛΑΟ *տառերը կարող են իմաստավորվել, եթե ընդունենք, որ երկրորդ Λ-ն իրականում Α է, որի հորիզոնական գծիկը այժմ չի նշմարվում, կա՛մ, պարզապես, չի եղել. ժամանակակիցներին լիովին պարզ էր, թե ում սկզբնատառերը և ինչու պետք է դրված լինեին այս դրամի վրա: Այսպիսով, դրամի դարձերեսի գրությունն է՝* ΛΑΟ ΚΑΙCΑΡ*:*

Կայսեր անունների, տիտղոսների հապավումը հռոմեական կայսրության տարածքում թողարկվող թե՛ լատիներեն, թե՛ հունարեն գրությամբ դրամների վրա լայնորեն տարածված երևույթ էր: Գրությունները երկար էին, իսկ դրամի վրա գրության համար տեղը քիչ էր, այդ պատճառով հարկադրաբար դիմում էին բառերը հապավելու եղանակին: Գրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կային հապավման որոշ կանոններ, բայց թեկադրողն, այնուամենայնիվ, տեղի սահմանափակությունն էր, ու եթե այն հարկադրում էր, ապա այդ կանոնները հեշտությամբ խախտվում էին: Այդպիսի օրինակներից մի քանիսը կհիշատակենք քիչ ուշ, իսկ այժմ տեսնենք, թե ինչ կտրող են նշանակել ΚΑΙCΑΡ *բառին նախորդող* ΛΑΟ *տառերը:*

Այդ տառերի և ամբողջ դրության վերծանման միակ հնարավոր տարբերակը հետևյալն է՝ Λ[ΟΥΚΙΟC] Α[ΥΡΗΛΙΟC] Ο[ΥΗΡΟC] ΚΑΙCΑΡ *- Լուկիոս Ավրելիոս Վերոս Կեսար՝ 161–169 թթ. Մարկոս Ավրելիոսի հետ համատեղ իշխած Լուկիոս Վերոս կայսեր անունը:*

Ահա Լուկիոս Վերոսի անվան հիշատակությամբ դրամական դրությունների մի քանի օրինակներ, որոնցում պարզ երևում է ոչ միայն բառն ազատորեն հապավելու, այլև կայսեր անվան չորս բաղադրիչներն անպայմանորեն պահպանելու սկզբունքը.[5]

ΑΥΤ[ΟΚΡΑΤΩΡ] ΚΑΙ[CΑΡ] Λ[ΟΥΚΙΟC] ΑΥΡ[ΗΛΙΟC] ΟΥΗΡΟC (№ 1811)

ΑΥΤ[ΟΚΡΑΤΩΡ] ΚΑΙC[ΑΡ] Λ[ΟΥΚΙΟC] ΑΥΡΗ[ΛΙΟC] ΟΥΗΡΟC (№ 1824)

ΑΥΤ[ΟΚΡΑΤΩΡ] ΚΑΙ[CΑΡ] ΑΡΜ[ΕΝΙΑΚΟC] Λ[ΟΥΚΙΟC] ΑΥΡΗΛ[ΙΟC] ΟΥΗ ΡΟC (№ 1823)

ΑΥΤ[ΟΚΡΑΤΩΡ] ΚΑΙCΑΡ Λ[ΟΥΚΙΟC] ΑΥΡ[ΗΛΙΟC] ΟΥΗΡΟC (№ 1872)

ΑΥΤ[ΟΚΡΑΤΩΡ] ΚΑΙ[CΑΡ] Λ[ΟΥΚΙΟC] ΑΥΡΗΛ[ΙΟC] ΟΥΗΡΟC ΑΡΜ[ΕΝΙΑΚΟC] (№ 1847)

ΑΥ[ΤΟΚΡΑΤΩΡ] ΚΑΙ[CΑΡ] Λ[ΟΥΚΙΟC] ΑΥΡΗ[ΛΙΟC] ΟΥΗΡΟ[C] (№ 1810)

ΑΥ[ΤΟΚΡΑΤΩΡ] Κ[ΑΙCΑΡ] ΛΟΥ[ΚΙΟC] ΑΥΡ[ΗΛΙΟC] ΟΥΗΡΟC CΕΒΑC[ΤΗC] ΑΡΜΕΝΙΑΚΟC (№ 1834)

Λ[ΟΥΚΙΟC] ΑΥΡΗ[ΛΙΟC] ΟΥΗΡΟC CΕΒ[ΑCΤΗC] (№ 1859)

---

[4] *Ավելորդ է անգամ այս կապակցությամբ որևէ աշխատություն հղելը, որովհետև բավական է աչքի անցկացնել ուշ հելլենիստական և հռոմեական դրամներին վերաբերող որևէ կատալոգի լուսանկարների տախտակները՝ համոզվելու համար դրանց առատության մեջ:*

[5] *Օրինակները վերցված են* D. R. S e a r. Greek Imperial Coins. London, 1982 *գրքից: Փակագծերում հղված են դրամների կատալոգային համարները:*

IMP[ERATOR] CAES[AR] L[VCIVS] AVR[ELIVS] VERVS AVG[VSTVS] ARM[ENIACVS] (№ 1875)

Լուկիոսը կայսեր անձնանունն էր և դրամների վրա սովորաբար գրվում էր միայն սկզբնատառով՝ L *(լատիներեն) և* Λ *(հունարեն): Ավրելիոսը Անտոնինոս Պիոսի տոհմանունն էր, որը հավելվեց Լուկիոսի անվանը, երբ վերջինս որդեգրվեց Անտոնինոսի կողմից: Դրամների վրա այն հիշատակվում էր* AVREL. *(լատիներեն) և* AYP., AYPH., AYPHΛ. *(հունարեն) հապավված ձևերով: Նրա անվան երրորդ բաղադրիչը՝ Վերոսը, նրա հոգեորդի գահակից եղբոր՝ Մարկոս Ավրելիոսի աղգանունն էր, որը, որպես կանոն, դրամների գրություններում տրվում էր լրիվ ձևով՝* VERVS *(լատիներեն) և* OYHPOC *(հունարեն):*

Հռոմում հատված համապետական դրամների վրա կայսեր լրիվ անվանը՝ Լուկիոս Ավրելիոս Վերոս, հանդիպում ենք միայն 161–163 թթ. թողարկումներում: Հետագայում, մինչև 169 թ. նա հիշատակվում է պարզապես որպես Լ. Վերոս:

Այլ է վիճակը պրովինցիալ լատինատառ և այսպես կոչված հունակայսերական թողարկումներում, որոնցում անկախ այն բանից, թե նրա գահակալման որ տարում են հատված դրամները, նա մեծ մասամբ հիշատակվում է իր բոլոր երեք անուններով՝ Լուկիոս Ավրելիոս Վերոս: Բայց կան նաև Լուկիոս Վերոս (կամ Բերոս), Լուկիոս Ավրելիոս, Ավրելիոս Վերոս և, անդամ, Լուկիոս Էլիոս[6] *Վերոս ձևերը: Որոշ թողարկումներում կայսրը հիշատակվում է միայն մեկ անվամբ՝ Վերոս, որն, ի դեպ, հանդիպում է նաև Մարկոս Ավրելիոսի կեսար եղած ժամանակ թողարկված դրամներում:*

Համապետական և պրովինցիալ թողարկումները տարբերվում են նաև կայսերական տիտղոսների նկատմամբ վերաբերմունքով: Առաջիններում IMPERATOR *և* CAESAR *տիտղոսները հանդիպում են միայն 161–163 թթ., մինչդեռ պրովինցիալ դրամների մեծ մասի գրություններում հանդես են գալիս որպես կայսեր հիմնական տիտղոսներ թողարկման վայրից ու ժամանակից անկախ: Հակառակ դրան,* AVGVSTVS *տիտղոսը սկզբից մինչև վերջ (161–163 թթ. իմպերատոր և կեսար տիտղոսների հետ միասին) առկա է համապետական դրամների վրա, իսկ պրովինցիալ թողարկումներում, ոչ քիչ դեպքերում, դրան համարժեք հունարեն* CEBACTOC *տիտղոսը կարող էր և չհիշատակվել:*

Պրովինցիալ թողարկումները բովանդակությամբ, բառերի դասավորությամբ և բառերը հապավելու բաղմազանությամբ տալիս են 21 տարբերակ, որոնցից միայն 4-ն են համապատասխանում 161–163 թթ. ընթացքում Հռոմում թողարկված համապետական նշանակության դրամների գրություններին: Ի դեպ, Հռոմում հատված փոքր չափի դրամների վրա, ինչպիսին են ոսկե կամ արծաթե քվինարիուսները, տեղի սահմանափակության պատճառով իմպերատոր և կեսար տիտղոսները չէին հիշատակվում: 163 թ. վերջից մինչև 169 թ. Լուկիոս Վերոսի քվինարիուսները թո-

---

[6] *Այս, ինչպես նաև Կոմոդոս անունները նա ստացել էր Անտոնինոս Պիոսի կողմից որդեգրվելու կապակցությամբ, բայց կայսր դառնալուց հետո դրանք չէին ընդգրկվել նրա պաշտոնական անվանաշարքում:*

ղարկվում էին L. VERVS AVG. *կարճ գրությամբ, մինչդեռ մյուս բոլոր դրամների վրա այդ բառերին ավելացվում էին* ARMENIACVS *կամ* ARM[ENIACVS], PARTH[ICVS] MAX[IMVS] *հաղթական տիտղոսները: Պրովինցիալ թողարկումներից միայն մի քանիսում է հանդիպում* ARMENIACVS *կամ* APMENIAKOC *տիտղոսը, իսկ* PARTHICVS MAXIMVS-*ն առհասարակ բացակայում է:*

Վերը հիշատակված տվյալները խոսում են ինքնավար թողարկումների նկատմամբ հսկողության խիստ կանոնների բացակայության մասին: Այս կոնտեքստում հասկանալի է դառնում Հայաստանում թողարկված դրամի գրության ինքնատիպությունը և հակիրճությունը՝ Λ. A. O. KAICAP, *որը կարելի է բացատրել դրա համար առկա տեղի սահմանափակությամբ:*

Նկատենք նաև, որ Լուկիոս Վերոսի անվամբ բոլոր ինքնավար թողարկումների գրություններում, բացառությամբ մեկի[7], KAICAP *տիտղոսը նախորդում է նրա անվանը: Մեր դրամի գրությունը բառերի դասավորությամբ նմանվում է Լուկիոսի գահակից Մարկոսի անունով մի շարք ինքնավար թողարկումների գրությանը՝* M. AYPHΛIOC OYHPOC KAI–CAP°, *որն էլ, հավանաբար, նրա համար ծառայել է որպես օրինակ:*

Այսպիսով, եթե արձանագրում ենք, որ քննարկվող դրամն առնչվում է Լուկիոս Վերոսի հետ, մնում է եզրակացնել, որ այն կարող էր թողարկել միայն Սոհեմ թագավորը, որին Լուկիոսը 164 թ. հաստատեց Հայաստանի գահին:

140–143 թթ. միջև Հռոմի կայսր Անտոնինոս Պիոսի թողարկած սեստերտի գարձերեսին պատկերված թագադրման տեսարանը և REX ARMENIIS DATVS *գրությունը վկայում են Հայաստանում 117 թ. իշխած Վաղարշ I-ի փոխարեն*[9] *մի նոր թագավոր նշանակելու մասին: Ո՛չ դրամն ինքը, ո՛չ էլ որևէ այլ աղբյուր, սակայն, չեն հիշատակում նորանշանակ արքայի անունը:*

Բրոնզ, սեստերտ (նկ. 3.Ա)

Դիմերես. Անտոնինոս Պիոսի գլուխը աջ, գափնեպսակով: Գրությունը դլխի հետևում՝ ANTONINVS AVG. PI, *առջևում՝* VS P.P.TR.P. COS. III: *Կետավոր շրջանակ:*

Դարձերես. Անտոնինոս Պիոսը կանգնած, հանդիպահայաց, դեմքով ձախ, աջ ձեռքն իրենից ձախ կանգնած Հայաստանի արքայի գլխին դրած: Վերջինս պատկերված է հանդիպահայաց, գլուխը ձախ, աջ ձեռքը դեպի

---

[7] D. R. S e a r. *Նշվ. աշխ. էջ 173,* № 1878:

[8] *Նույն տեղում,* № 1568, 1601, 1606, 1609 *և այլն:*

[9] *Պատմաբաններից ոմանք ենթադրում են, որ Վաղարշ I-ը գահընկեց է արվել, տե՛ս Յ. Մ ա ր կ վ ա ր տ. էջ մը հայ Արշակունեաց հնագոյն պատմութենէն.— «Հանդէս Ամսօրյա», 1906, էջ 35-38, Հ. Յ. Ա ս տ ո ւ ր ե ա ն. Քաղաքական վերաբերություններ ընդմէջ Հայաստանի և Հռոմայ. Վենետիկ - Ս. Ղազար, 1912, էջ 214, Ս. Տ. Ե ր ե մ յ ա ն. Հայաստանի քաղաքական վիճակը մ.թ. II դարում.— Հայ ժողովրդի պատմություն (այսուհետև՝ ՀԺՊ). հ. 1, Երևան, 1971, էջ 780, իսկ մյուսները կարծում են, որ Վաղարշ I-ը վախճանվել է և նրա փոխարեն նշանակվել է նոր թագավոր, տե՛ս Հ. Մ ա ա ն դ յ ա ն. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. Երկեր. հ. Բ, Երևան 1978, էջ 42 և ծանոթ. 2:* К. В. Т р е в е р. Очерки по истории культуры древней Армении. М.—Л., 1953, с. 224.

ճակատը ծալած: Կետավոր շրջանակ: Գրությունը ձախից՝ REX ARMENIIS, աջից՝ DATVS, ներքևում՝ S. C[10].

Պատմագիտության մեջ ընդունված է այն վարկածը, որ Վաղարշ I-ից հետո, 140/1 թ. Հռոմի կողմից Հայաստանի թագավոր է նշանակվել Սոհեմը, որի թագավորումն այնուհետև ընդհատվել է 161 թ. և վերականգնվել 164 թ.: Այս ենթադրությունը հիմնվում է Ֆոտիուսի և Դիոն Կասսիոսի հաղորդած տեղեկությունների վրա[11]:

Ըստ 66 թ. Հռանդեայում կնքված հռոմեա-պարթևական հաշտության համաձայնագրի, Հայաստանի գահի թեկնածու պետք է առաջադրեր պարթևական կողմը, իսկ Հռոմի կայսրն ու սենատը պետք է վավերացնեին նրա գահակալումը: Անտոնինոս Պիոսն այդ պայմանը, հավանաբար, խախտել էր: Պարթև արքայից արքա Վաղարշ III-ը (105-147 թթ.), ապա՝ Վաղարշ IV-ը (147–191 թթ.) սպառնում էին պատերազմ սկսել ու վերականգնել իրենց ոտնահարված իրավունքները Հայաստանում: Հռոմի կայսրը կարողացավ դիվանագիտական ճկունությամբ առժամանակ խուսափել պարթևների հետ ռազմական ընդհարումից: Սակայն, 161 թ. Անտոնինոս Պիոսի վախճանից քիչ անց, Վաղարշ IV-ը սկսեց վաղուց ծրագրվող ռազմական արշավանքը գեպի Հայաստան, ապա՝ Հյուսիսային Միջագետք և Սիրիա:

161 թ. պարթևական բանակը Ամսորով զորավարի հրամանատարությամբ Հայաստանի հյուսիս-արևմուտքում գտնվող Էլեգեիա վայրում շրջապատեց և հիմնովին ջախջախեց Կապադովկիայի կուսակալ Սևերիանոսի լեգիոնը: Մինչ այդ դեպքը, ըստ վերոհիշյալ վարկածի, Սոհեմը վտարվել էր Հայաստանից ու մեկնել Հռոմ, իսկ նրա փոխարեն Վաղարշ IV-ը հայերի վրա թագավոր էր դրել Բակուրին: Այնուհետև, պարթևներն իրենց ռազմական հաջողություններն արագորեն զարգացրին նաև Հյուսիսային Միջագետքում և Սիրիայում, որտեղ նրանք գրավեցին Մծբինը, Եդեսիան և անցնելով Եփրատն ու փախուստի մատնելով Ասորիքի կառավարիչ Կոռնելիանոսին՝ հարձակումներ էին գործում սիրիական քաղաքների վրա[12]:

Հռոմի նորընծա կայսր Մարկոս Ավրելիոսը, սենատի հավանությունը ստանալով, Արևելք ուղարկեց իր եղբայր և գահակից կայսր Լուկիոս Վերոսին՝ պարթևական պատերազմն առաջնորդելու համար: Վերջինս ժամանեց Անտիոք 162 թ. վերջին, իսկ 163-ի գարնանը հռոմեական բանակը Ստատիոս Պրիսկոսի գլխավորությամբ ներխուժեց Հայաստան և նույն տարվա ընթացքում գրավեց Արտաշատ մայրաքաղաքը[13]:

---

[10] Զ. Պ ո ւ կ ե ա ն. Հայաստանի վերաբերեալ հռոմէական դրամներ և մեդալիոններ. Վիեննա, 1971, էջ 87-88, № 34, H. M a t t i n g l y. Coins of the Roman Empire in the British Museum. Vol. IV, London, 1968, p. 204, pl. 29.2* (այստեղ և ստորև՝ աստղանիշով նշված են այն դրամները, որոնց լուսանկարները զետեղված են մեր նկ. 3-ում), Classical Numismatic Group, Auction 36 (1995), 670, Sammlung Nicolas V. Jamgochian, Antike Münzen, Katalog 340 (1994), 943.

[11] P h o t i u s. Bibliotheca, 94; D i o n, LXXI, 3.1.

[12] J u l i u s C a p i t o l i n u s. Scriptores historiae Augustae, Marcus Antoninus 8.6; D i o n, LXXI, 2.1.

[13] Նույն տեղում, 9.1; Verus 7.1; L u c i a n u s. Quomodo historia conscribenda sit, 20.

Նկ. 3

Ֆրոնտոյի, ինչպես նաև Ֆոտիուսի մոտ պահպանված Ասինիուս Կվադրատուսի համառոտ տեղեկությունները վկայում են, որ հռոմեա-հայկական պատերազմի ընթացքում, 161–163 թթ., Հայաստանի թագավորն էր Պակորը (Բակուրը)[14]: Հայաստանը վերանվաճելուց հետո, Պակորը զրկվեց թագավորությունից[15] ու տարվեց Հռոմ[16], իսկ նրա փոխարեն Հռոմի կայսրերի ու սենատի կողմից Հայաստանի գահին հաստատվեց Սոհեմը[17]:

Հայկական պատերազմի հաղթական ավարար Հռոմում նշանավորեցին ոսկե, արծաթե և բրոնզե բազմաթիվ թողարկումներով, որոնցում նախ Լուկիոս Վերոսը, ապա նաև Մարկոս Ավրելիոսը հիշատակվեցին ARMENIACVS տիտղոսով: 164 թ. մի առանձին թողարկում, բաղկացած ոսկե աուրեուսներից, բրոնզե սեստերտներից և դուպոնդիուսներից, նվիրվեց Հայաստանում նոր արքայի նշանակմանը:

Ոսկի, աուրեուս

1ա. Դիմերես. Լուկիոս Վերոսի կիսանդրին աջ, դալինեպսակով: Գրությունը գլխի հետևում՝ L. VERVS AVG., առջևում՝ ARMENIACVS: Կետավոր շրջանակ:

Դարձերես. Լուկիոս Վերոսը զինվորական զգեստով, բեմի վրա դրված կուրուլյան աթոռին նստած ձախ: Առաջ պարզած աջ ձեռքն իր առջև ներքևում կանգնած Հայաստանի արքայի (Սոհեմի) գլխավերևում պահած: Վերջինս պատկերված է հանդիպահայաց, գլուխը ձախ, աջ ձեռքը դեպի ճակատը ծալած: Կայսեր ձախ և աջ կողմերում, բեմի վրա, պատկերված են դեպի ձախ կանգնած երկու անձնավորություններ, ձախ կողմում կանգնածի ձեռքին կա ուղղաձիգ բռնած սուր: Կետավոր շրջանակ: Գրությունը. վերևում պայտաձև՝ ձախ կողմում՝ TR. P. IIII, աջ կողմում՝ IMP. II COS. II, ներքևում երկու տողով՝ REX ARMEN. / DAT [18], (նկ. 3.1ա):

1բ. Նույնը, բայց դարձերեսին կայսեր ձախ կողմում կանգնած անձնավորությունն աջ ձեռքում բռնած սուրը հենել է ուսին[19] (նկ. 3.1բ):

---

[14] F r o n t o. Epistolae, II.1; Asinius Quadratus, Parthica, fr. 9 (P h o t i u s. Bibliotheca, 94).

[15] F r o n t o. Epistolae, II.1.

[16] Այս մասին վկայում է XVI դ. Հռոմում հայանաբերված հունարեն արձանագրությունը, տե՛ս K. B. T p e в e p. Նշվ. աշխ., էջ 237–242:

[17] F r o n t o. Epistolae, II.1: "Marcus Aurelius quod Sohaemo potius quam Vologaeso regnum Armeniae dedisset aut quod Pacorum regno privasset" (Մարկոս Ավրելիոսը նախընտրեց Հայաստանում թագավորությունը տալ Սոհեմին, այլ ոչ թե Վաղարշին, իսկ Պակորին զրկեց թագավորությունից): Մարկվարան իրավացիորեն նկատել է, որ այստեղ հիշատակված Վաղարշը չի կարող արքայից արքա Վաղարշ IV-ը լինել, այլ թերևս նրա որդին, ապագա Վաղարշ V-ը: Այսինքն, Պակորի փոխարեն պարթևները, հավանաբար, որպես հայկական գահի թեկնածու են առաջադրել Վաղարշին, բայց Հռոմը նախապատվությունը տվել է Սոհեմին, տե՛ս Ց. Մ ա ր կ վ ա ր տ. Նշվ. աշխ., էջ 38, ծան. 3 և Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 47:

[18] Զ. Պ տ ո ւ կ ե ա ն. Նշվ. աշխ., էջ 103, № 50, H. M a t t i n g l y. Նշվ. աշխ., էջ 426, տախտ. 58.11* (աստղանիշով նշված են այն դրամները, որոնք պատկերված են մեր նկ. 3-ում):

[19] Numismatic Fine Arts, Auction XXXII (1993), 321; Sammlung Nicolas V. Jamgochian..., no. 976*.

1դ. Նույնը, բայց դարձերեսի գրությունը՝ REX ARMENIIS DATVS IMP. II TR.P. IIII COS. II[20]:

Բրոնզ, սեստերտ

2ա. Դիմերես. Նույնը, բայց դրությունը գլխի վերևում՝ L. AVREL. VERVS AVG., *առջևում՝* ARMENIACVS:

Դարձերես. Նույն տեսարանը, բայց Լուկիոս Վերոսի ձախ և աջ կողմում պատկերված են երեք անձնավորություններ, որոնցից ձախ կողմինը՝ դեմքով դեպի Լուկիոսը, աջ ձեռքում ուղղաձիգ դիրքով սուր բռնած, իսկ Լուկիոսի և նրա հետևում կանգնած անձնավորության միջև՝ հանդիսատեսաց պատկերված գլուխ: Գրությունը շրջանաձև՝ REX ARMENIIS DATVS IMP. II TR. P. IIII COS. II, *ներքևում՝* S. C.[21], *(նկ. 3.2ա):*

2բ. Նույնը, բայց դարձերեսին պայտաձև գրություն՝ TR. P. IIII IMP. II COS. II, *ձախ դաշտում՝* S., *աջում՝* C., *ներքևում երկու տողով՝* REX ARMEN. / DAT.[22] *(նկ. 3.2բ):*

2գ. Նույնը, բայց դարձերեսին Լուկիոսի ձախ կողմում պատկերված անձնավորությունը դեպի ձախ[23] *(նկ. 3.2գ):*

2դ. Նույնը, դարձերեսին Լուկիոսի ձախ կողմում պատկերված անձնավորությունը դեպի ձախ, բայց աջ ձեռքում բռնած սուրը Սոհեմի գլխավերևում դեպի առաջ պարզած[24] *(նկ. 3.2դ):*

Բրոնզ, դուպոնդիուս

3. Նույնը (ինչպես 2գ)[25] *(նկ. 3.3):*

Դրամները հատվել են Հռոմում, և կայսեր տիտղոսների հիման վրա թվագրվում են 163 թ. դեկտեմբերից մինչև 164 թ. դեկտեմբեր ընկած ժամանակահատվածով:

Ուշադրավ է, որ այսպիսի դրամներ թողարկվել են միայն Լուկիոս Վերոսի դիմապատկերով, և որ Հայաստանի արքային թագադրողի դերում հանդես է գալիս հենց Լուկիոս Վերոսը: Այսինքն, վերջինս ներկայանում էր ոչ միայն որպես հայկական պատերազմում հաղթող, այլ նաև նոր թագավորի նշանակման անմիջական նախաձեռնող և իրագործող: Ոչ մի հետազոտող չի տարակուսում, որ դրամների վրա պատկերված թագադրվող արքան Սոհեմն է: Սակայն առայժմ հռոմեական ո՛չ այս դրամները, և ո՛չ էլ խնդրո առարկա հայկական դրամը լույս չեն սփռում Սոհեմի անձի և նրա թագավորման մշուշոտ պատմության վրա:

---

[20] *Զ. Պ տ ռ ւ կ ե ա ն. Նշվ. աշխ., էջ 104, № 51,* H. M a t t i n g l y, *Նշվ. աշխ., էջ* 426, *ծանոթ.* 302: *Լուսանկարները չկան, և նկարագրությունից պարզ չէ, թե դարձերեսի ո՞ր տարբերակն է:*

[21] *Զ. Պ տ ռ ւ կ ե ա ն. Նշվ. աշխ., էջ 119-120, № 148,* H. M a t t i n g l y. *Նշվ. աշխ., էջ* 562 *տախտ.* 75.8; Classical Numismatic Group, Auction 46 (1998), № 706*:

[22] *Զ. Պ տ ռ ւ կ ե ա ն. Նշվ. աշխ., էջ 120, № 150,* H. M a t t i n g l y. *Նշվ. աշխ., էջ* 563, *տախտ.* 76.1; Sammlung Nicolas V. Jamgochian..., № 978*:

[23] *Զ. Պ տ ռ ւ կ ե ա ն. Նշվ. աշխ., էջ 104, № 151,* H. M a t t i n g l y. *Նշվ. աշխ., էջ* 562, *ծանոթ.* 1101-1102; Sammlung Nicolas V. Jamgochian..., № 977*; Italo Vecchi 4 (1996), № 238:

[24] *ՀՊԹ 17620/12, 29.93 գ, 32 մմ, նվեր Գ. Գալաճյանից :*

[25] *Զ. Պ տ ռ ւ կ ե ա ն. Նշվ. աշխ., էջ 132-133, № 222,* H. M a t t i n g l y. *Նշվ. աշխ., էջ* 566, *տախտ.* 76.6A*:

Ըստ Սոհեմի ժամանակակից Յամբլիքոսի, որին մեջբերում է Ֆոտիուսն իր Bibliotheca-ում, Սոհեմը սերում էր աքեմենյան և արշակունյան ծագում ունեցող արքայական տոհմից: Եթե հետևենք Ֆոտիուսի շարադրանքի հաջորդականությանը, նա եղել է թագավոր, ապա դարձել է Հռոմի ծերակույտի անդամ և հյուպատոս, հետո կրկին դարձել է Մեծ Հայաստանի թագավոր[26]*: Իսկ Դիոն Կասսիոսն ասում է, որ «Մարտիոս Վերոսն ուղարկել էր Թուկիդիդեսին, որպեսզի նա Սոհեմոսին վերստին բերի Հայաստան»*[27]*: Ահա այս տեղեկությունների և Անտոնինոս Պիոսի ու Լուկիոս Վերոսի հռոմեական վերոհիշյալ դրամների տվյալների համագրությամբ հիմնավորվում է այն վարկածը, որ Սոհեմը Հայաստանում իշխել է երկու անգամ՝ 140/1-ից մինչև 161 թ. և 164-ից սկսած: Վաղարշ IV-ի ներխուժումը Հայաստան նրան հարկադրել է թողնել թագավորությունն ու տեղափոխվել Հռոմ, որտեղ էլ, 161-163 թթ. ընթացքում, նա դարձել է սենատոր և կոնսուլ:*

Կա նաև այլ վարկած, ըստ որի Սոհեմը Հայաստանում իշխել է միայն 164 թ. սկսած: Այս վարկածի հեղինակներից առաջինը Մոմզենն էր, որը հիմնվելով Ֆրոնտոյի «Մարկոս Ավրելիոսը նախընտրեց Հայաստանում թագավորությունը տալ Սոհեմին, այլ ոչ թե Վաղարշին, իսկ Պակորին զրկեց թագավորությունից» (Fronto, *Epistolae* II, 1) *և Լ. Վերոսի rex armeniis datus գրությամբ վերոհիշյալ դրամների վրա բացառել է Սոհեմի մինչ այդ թագավոր եղած լինելու հնարավորությունը*[28]*:*

Մեկ այլ հեղինակ, Հ. Դոդդը, ելնելով այն փաստից, որ Մ. Ավրելիոսի և Լ. Վերոսի 168 թ. թողարկումներում կրկին հայանվում են արևելյան իրադարձություններն ակնարկող երկու տիպեր, ենթադրում է, որ Տրդատ սատրապի ապստամբությունը տեղի է ունեցել Լուկիոս Վերոսի Հռոմ վերադառնալուց հետո, որի ընթացքում Սոհեմը ստիպված է եղել թողնել Հայաստանը և ապաստանել 166 թ. Կապադովկիայի կառավարիչ նշանակված Մարտիոս Վերոսի մոտ: Վերջինս, հնազանդեցնելով ապստամբներին և ձերբակալելով Տրդատին, ոմն Թուկիդիդեսի հրամայում է Սոհեմին ուղեկցել Հայաստան և վերահաստատել իր դահին: Այս իրադարձությունները կարող էին առիթ հանդիսանալ դրամական պատկերատիպերում հայկական թեմայի վերակենդանացման համար[29]*:*

Սրանից երկու տարի անց հրատարակված մի հոդվածում Ա. Պրեմերշտայնը, ծանոթ չլինելով Հ. Դոդդի վերոհիշյալ դատողություններին (քանի որ դրանց մասին չի հիշատակում), միայն դրավոր աղբյուրների քննության հիման վրա հանգել է հիմնականում նույն եզրակացությանը:

---

[26] P h o t i u s. Bibliotheca, 94. *«...Աքեմենյան Արշակունյան Սոհեմոսի ժամանակ, որը թագավոր էր և հաջորդել էր իր նախնիներին, որոնք նույնպես եղել էին թագավորներ: Բայց նա նաև Հռոմի ծերակույտի անդամ եղավ ու նաև հյուպատոս և հետո կրկին անդամ դառավ թագավոր Մեծ Հայաստանի» (թարգմ. ըստ Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Քննական տեսություն..., էջ 42–43):*

[27] D i o n, LXXI, 3.1.

[28] *Այս տեսակետի մասին տե՛ս* A. V. P r e m e r s t e i n. Untersuchungen zur Geschichte des Kaisers Marcus.– "Klio", Bd. XIII (1913), S. 90.

[29] C. H. D o d d. Chronology of the Eastern Campaigns of the Emperor Lucius Verus.– "Numismatic Chronicle", № XI (1911), pp. 260-265.

Ըստ Պրեմերշտայնի, Սոհեմը, 164 թ. նշանակված լինելով թագավոր, մի քանի տարի անց Տրդատի բարձրացրած ապստամբության պատճառով հալածվում է Հայաստանից: Վերջինս, հավանաբար, սերում էր Արշակունիների արքայական տոհմից և կարող էր ազգակցական կապ ունենալ մ. թ. I դ. Հայաստանում թագավորած Տրդատի հետ: Կապադովկիայի կառավարիչ նշանակված Մարտիոս Վերոսը, որն այդ պաշտոնը ստանձնել էր հռոմեա-պարթևական պատերազմից հետո (166 թ.), ճնշելով Հայաստանում ծագած ապստամբությունը և ձերբակալելով Տրդատին՝ Թուկիդիդեսի, հավանաբար կապադովկիական երկու լեգիոններից մեկի հրամանատարի, ուղեկցությամբ մոտավորապես 172 թ. Սոհեմին վերահաստատում է իր գահին: Եվ միայն այդ ժամանակ է, որ 164 թ. Պրիսկոսի կողմից հիմնադրված Կայնեպոլիսը, ուր տեղավորվել էր հռոմեական կայազորը, Մարտիոս Վերոսի կողմից հայտարարվում է Հայաստանի գլխավոր քաղաք՝ Արտաշատի փոխարեն[30]:

Դժվար է անվերապահորեն ընդունել երկու հիմնական վարկածներից որևէ մեկը, քանի որ աղբյուրներում անորոշությունները շատ են: Սակայն, հավանականության առումով, ավելի նախապատվելի է թվում երկրորդը: Նախ, մենք չգիտենք 140–143 թթ. Անտոնինոս Պիոսի կողմից Հայաստանում նշանակված թագավորի անունը: Արդյո՞ք այն իրոք Սոհեմն էր: Ինչպես ճիշտ նկատել է Հ. Դոդդը, պատերազմում հռոմեացիների գլխավոր խնդիրը Հայաստանում դրածո թագավոր ունենալն էր, որը Լուկիոս Վերոսը նշանավորեց դրամական հատուկ թողարկումներով: Այդ դեպքում, թագավորն ինչո՞ւ պետք է Հայաստան բերվեր երրորդական կարգի պաշտոնյայի ուղեկցությամբ: Այլ բան է, եթե նա վերահաստատվել է իր դահին ապստամբությունից հետո:

Այժմ անդրադառնանք դրամի դարձերեսին պատկերված սարին, որը Արդեոս լեռը լինել չի կարող այն պատճառով, որ բոլորովին նման չէ այդ լեռանը: Արդեոսը (այժմ՝ Էրջիյաս) երեք գագաթներ ունեցող հրաբխային լեռ է (նկ. 4): Նրա հյուսիսային լանջին էր գտնվում Կապադովկիայի մայրաքաղաք Մաժաքը (Μαζακα), հելլենիստական շրջանում Եվսեբիա, իսկ մ.թ.ա. 12–9 թթ. միջև՝ Կեսարիա վերանվանված (այժմ՝ Կայսերի)[31], որը Հռոմեական կայսրությունում նույնանուն երեք խոշոր քաղաքներից մեկն էր, Փոքր Ասիայի քաղաքական և ռազմական կարևորագույն կենտրոնը: Մաժաքի և Արդեոս լեռան հետ է կապվում հայ հնագույն առասպելներից մեկը, ըստ որի արմենների նախահայր Արամը այս վայրում հաղթել է Պայասիս Քաղյա Տիրանյանին,[32] որը ստորերկրյա հրաբխային կործանիչ ուժերը մարմնավորող հունական Տիփոնի տարբերակն էր (սրան հաղթել ու Տարտարոս էր նետել Զևսը): Քաղաքը Կեսարիա վերանվանվե-

---

[30] A. V. P r e m e r s t e i n. Նշվ. աշխ., էջ 88–91:

[31] W. W r o t h. Catalogue of the Greek Coins of Galatia, Cappadocia, and Syria. British Museum; reprint, Bologna, 1964.

[32] *Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի. գ. Ա, գլ. ԺԴ: Հայ ժողովրդի վաղագույն շրջանի պատմության կոնտեքստում այս առասպելի մեկնաբանության մասին տե՛ս Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 25-29, ՀԺՊ 1, էջ 233-235, 1971, Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայ առասպելաբանություն. Բեյրութ, 2000, էջ 116-117:*

Նկ. 4

Նկ. 5

լուց ի վեր մինչև Գորդիանոս III կայսրը (238–244 թթ.) նրանում գործող դրամահատարանը Արևելքի երեք գլխավոր դրամահատարաններից մեկն էր (մյուս երկուսն Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքինը և Սիրիայի Անտիոքինն էին): Կեսարիայի դրամահատարանը թողարկում էր արծաթե և բրոնզե, դերազանցապես զուտ հռոմեական պատկերագրության դրամներ: Միակ բացառությունը, ինչպես նշում է Վ. Ռոթը, Արգեոս լեռը ներկայացնող տիպն էր, զանազան տարբերակներով (նկ. 5), որն առաջին անգամ հայտնվում է Կապադովկիայի Արքելայոս թագավորի բրոնզե դրամների դարձերեսին մ.թ.ա. 36–10 թթ. ընթացքում[33]*: Այստեղ Արգեոսը պատկերված է իր երեք գագաթներով, որոնցից ամենաբարձրի գագաթին (Մեծ Արգեոս) կանգնած է սարի նկատմամբ անհամաչափորեն խոշոր, թևատարած արծիվ (*Wroth 1964, Pl. VIII, 1*): Սրան հաջորդած մեկ այլ՝ Տիբերիոս կայսեր օրոք թողարկված դրամի վրա լեռան ամենաբարձր գագաթին պատկերված է մերկ տղամարդ, կանգնած, երբեմն ճառագայթավոր պսակով, աջ ձեռքին դունդ, ձախում՝ գավազան (*Wroth 1964, Pl. VIII, 8*): Այս տիպը, պատկերագրական մանրամասներում որոշ տարբերություններով, շատ անգամ հանդիպում է հետագա կայսրերի թողարկումներում (*Wroth 1964, Pl. VIII, 12, Pl. IX, 6, 7; Pl. X, 6, Pl. XI, 11 և այլն*): Սրան հետևում և նախորդի հետ զուգահեռ հանդես են գալիս հետևյալ տիպերը. լեռան գագաթին պսակ (*Wroth 1964, Pl. IX, 2. Pl. X, 8, XIII, 2*) կամ աստղ (*Wroth 1964, Pl. X, 17, 18, 20, Pl. XI, 4, 16*), մեկական աստղ յուրաքանչյուր գագաթին (*Wroth 1964, Pl. X, 7*), բարձր գագաթին դունդը և գավազանը ձեռքին մերկ տղամարդ, իսկ ցածր գագաթների վերևում՝ աստղ և մահիկ (*Wroth 1964, Pl. X, 6*), լեռան գագաթին պատկերված կոնաձև շինություն (*Wroth 1964, Pl. XI, 1*), բարձր գագաթին աստղ, իսկ ձախ կողմի ցածր գագաթին՝ մահիկ (*Wroth 1964, Pl. XI, 15*), լեռան բարձր և երկու ցածր գագաթներին կանգնած, ձախ ձեռքում գավազան բռնած տղամարդիկ, իսկ լեռան ստորոտին՝ տետրաստիլ տաճար (*Wroth 1964, Pl. XI, 19*), նույնը, բայց ցածր գագաթների վրա կանգնած տղամարդկանց փոխարեն՝ աստղ և մահիկ (*Wroth 1964, Pl. XII, 3*): Սրանցից բացի, Արգեոսը դրամների վրա պատկերված է որպես αγαλμα՝ լեռան պատկերը մանրակերտի տեսքով, հավանաբար՝ տաճարում իբրև նվիրատվություն մատուցվող: Առաջին անգամ այն հայտնվում է Կոմոդոսի օրոք (176–192) թողարկված դրամների վրա, երբեմն զոհասեղանին դրված (*Wroth 1964, Pl. XI, 9, 13; Pl. XII, 1, 7*), քառաձի հաղթակառքի վրա կանգնած Սևերոս Ալեքսանդր կայսեր ձեռքում (*Wroth 1964, Pl. XII, 9*), Սարապիս աստվածության ձեռքում (*Wroth 1964, p. XXXIV*), դիստիլ տաճարի ներսում (*Wroth 1964, Pl. XII, 4, 12*):*

Արգեոս լեռան պատկերով դրամական տիպերի նույնիսկ այս ոչ լրիվ և պատկերագրական ոչ բոլոր մանրամասնություններով թվարկումը վկայում է ժամանակի կրոնական պատկերացումների համակարգում Արգեոս լեռան արտակարգ կարևորության մասին: Վ. Ռոթի կարծիքով, մինչև հռոմեացիների գալը լեռը, անկասկած, ունեցել է իր տեղական աստվա-

[33] W. W r o t h. Նշվ. աշխ., էջ XXXV; XXXIV, note:

ծությունը, իսկ հռոմեացիների օրոք լեռան պաշտամունքը հարմարեցվել է աստվածացված կայսեր պաշտամունքին: Լեռան դագաթին պատկերվող անձնավորությունը կարող էր լինել աստվածային Օգոստոսը և Հելիոսը՝ նույն կերպարի մեջ միավորված[34]: Այս մեկնաբանությունը, որն ըստ երևույթին ճիշտ է, լիովին չի բացատրում Արգեոս լեռան և դրա «առանցքի» շուրջը ձևավորված պաշտամունքային ամբողջ համալիրի էությունը: Իսկ որ այն եղել է բավական բարդ ու բազմագործառութային, կարելի է դատել դրամական տիպերում պաշտամունքային տարրերի բաղմաղանությունից և դրանց բազմասլիսի համադրություններով հանդես գալու հանգամանքից:

Արգեոս լեռան դրամական տիպերի մեկնաբանության խնդիրն ուղղակիորեն չի առնչվում այս հոդվածի թեմային: Տվյալ հարցի կապակցությամբ մեզ ավելի հետաքրքրում է այն, թե դրամների՝ վրա ինչպես էր պատկերվում Արգեոս լեռը: Շատ դեպքերում այն պատկերվում էր որպես շատ թե քիչ ընդգծված եռագագաթ սար, վիհերով ու բլրակներով կտրտված ռելիեֆով: Լեռան լանջերին եղել են անտառակներ, որոնք որոշ տիպերում ներկայացված են լեռան երկու կողմից բարակ գծիկների տեսքով: Կան, սակայն, դրամներ, որոնց վրա դժվար է ճանաչել Արգեոս լեռան ուրվագիծը, քանի որ այն կա՛մ կոնաձև միագագաթ սարի տեսք ունի (Wroth 1964, Pl. X, 14, 17, 18, 20, Pl. XI, 4), կա՛մ հասակ չեն նրա երկու ցածր գագաթները՝ Հողային և Փոքր Արգեոսները (օր. Wroth 1964, Pl. IX, 6; Pl. XI, 11): Այնուամենայնիվ, ոչ մի դրամի վրա Արգեոսը չի ստացել այնպիսի տեսք, ինչպիսին մեր դրամների վրա պատկերված սարն է: Զգալիորեն տարբեր է նաև պատկերման ոճը: Կեսարիայի թողարկումներում Արգեոսի պատկերները բավական պայմանական են, հաճախ՝ խիստ ոճավորված: Մեր դրամների վրա լեռը ներկայացված է գրեթե ռեալիստական պատկերմամբ և առհասարակ, դարձերեսի այս պատկերատիպը, ավելորդություններից զուրկ պարզությամբ, իր մեջ դեռևս պահպանած ունի հելլենիստական դրամական ավանդույթները:

Կարծում ենք, որ այս երկար էքսկուրսը բավականաչափ համոզիչ պետք է լինի քննարկվող դրամների վրա պատկերված լեռը Արգեոսի հետ նույնացնելու, բնականաբար նաև՝ դրանք Կեսարիայի դրամահատարանին վերագրելու գոյություն ունեցող տեսակետից վերջնականապես հրաժարվելու համար: Մյուս կողմից, մեծ ջանքեր պետք չեն ապացուցելու համար, որ դրամի վրա պատկերված, միմյանցից խոր թամբարդով բաժանված երկու սրագագաթ սարերը, որոնցից աջ կողմինը մյուսից բարձր է, Արարատյան դաշտավայրից կամ հյուսիս-արևելքից դիտված Մեծ և Փոքր Մասիսներն են կամ Արարատ լեռը՝ շատ ծանոթ, վեհաշուք ու սիրելի տեսարան (նկ. 6):

Ի՞նչը կարող էր Առհեմի դրամների դարձերեսի համար Մասիսը որպես դրամատիպ ընտրելու առիթ հանդիսանալ և ի՞նչ կարող էր այլաբանորեն իմաստավորել այդ պատկերը. Հռոմի երկու կայսրերի՝ Մարկոս Ավրելիոսի և Լուկիոս Վերոսի գերագույն իշխանությունը, Հռոմի և Հայաստանի

[34] W. Wroth. Նշվ. աշխ., էջ XXXIX-XL:

միջև վերահաստատված դաշի՞նքը, թե՞ Լուկիոս Վերոսի հովանու ներքո հայոց թագավորի և թագուհու միությունը:

Մի շարք հեղինակներ նկատել են, որ Մովսես Խորենացու մոտ հիշատակվող Տիգրան վերջինը կարող է նույնացվել Սոհեմ թագավորի հետ[35]*: Եթե հայտնաբերվեն այս թողարկման լավ պահպանված նմուշներ, որոնք թույլ կտան ընթերցել գիմերեսի գրությունը, հնարավոր է, որ նրանում, իրոք, կարդանք ոչ թե Սոհեմ, այլ Տիգրան անունը: Դա կնշանակեր, որ Սոհեմը թագադրվել է Տիգրան ավանդական անվամբ, ինչպես անցյալում Զենոնը, Պոնտոսի արքայի որդին, մ. թ. 18 թ. Հայաստանի գահը բարձրացավ Արտաշես անվամբ: Պատմելով Տիգրան Վերջինի մասին, Խորենացին ասում է նաև, որ «...Ղուկիանոս կեսարը (ի նկատի ունի Լուկիոս Վերոսին)...ետ զՌուփի զկոյս, զմերձաւոր իւր, նմա կնութեան...»: Լուկիոս Վերոսի հետ հայոց թագուհու աղդակցական կապի շնորհիվ չէ՞ արդյոք, որ թագուհու պատկերը ևս հայտնվել է այս թողարկման վրա:*

Սրանք հարցեր են, որոնք դուցե ընդմիշտ մնան առանց վերջնական պատասխանի: Այսօր կարող ենք գրեթե առանց երկմտանքի աբձանագրել, որ մ. թ. առաջին տասնամյակում վերջին Արտաշեսյանների դրամաթողարկման դադարումից չուրջ հարյուր հիսուն տարի անց Հայաստանի ևս մի արքայի կողմից իրագործվել է դրամական թողարկում:



Նկ. 6

Մասիսների տակ պատկերված A տառի վերաբերյալ կարող է առաջարկվել մեկնաբանման երկու վարկած: Մեկը, որ այն դրամի թողարկման տարեթիվն է, այսինքն՝ Սոհեմի թագավորման առաջին տարին: Այս դեպքում պետք է ենթադրել, որ դրամաթողարկումը կատարվել է միայն 164/5 թ., քանի որ A-ից բացի այլ տառերով դրամներ առայժմ հայտնի չեն: Ըստ մյուս վարկածի, որն ավելի հավանական է թվում, A-ն Մասիսի ստորոտին գտնվող Արտաշատ մայրաքաղաքի սկզբնատառն է, որտեղ և կա-

[35] *Զ ա մ չ ե ա ն. Պատմութիւն Հայոց. հ. Ա, Վենետիկ, 1784, էջ 355-357,* К. К о с т а н я н ц. История Армении (краткий очерк. М., 1911, с. 42; *Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 50-52,* К. В. Т р е в е р). *նշվ. աշխ., էջ 225–226:*

տարվել է այդ դրամների թողարկումը: Եթե ընդունելու լինենք Ա. Պրեմերշտայնի վերոհիշյալ տեսակետը, որ հռոմեացի զորավարը Կայնեպոլիսը Հայաստանի գլխավոր քաղաք է հայտարարել Սմբատի ապստամբությունը ճնշելուց և Սոհեմին վերադարձնելուց հետո միայն, ապա այս դրամների թողարկումը կարող է տեղադրվել 164-ից մինչև մոտավորապես 167 թ. ընկած ժամանակահատվածում, երբ Սոհեմը գտնվում էր Հայաստանի թագավորանիստ Արտաշատ քաղաքում:

АРМЯНСКИЕ МЕДНЫЕ МОНЕТЫ, ЧЕКАНЕННЫЕ ПРИ ЛУЦИИ ВЕРЕ

РУБЕН ВАРДАНЯН

Резюме

Рассматриваемые монеты на лицевой стороне имеют портреты безбородого царя в армянской тиаре и царицы. Греческая легенда, расположенная вокруг портретов, остается пока нечитаемой, поскольку на всех 10 экземплярах, известных в настоящее время, она почти целиком находится за пределами монетного кружка. На оборотной стороне изображены две горы с остроконечными вершинами. Над горами греческая легенда полукругом, а внизу буква "А". П. Бедукян и т.д., который в 1978 г. впервые опубликовал одну из таких монет, счел возможным приписать эту эмиссию к Тиграну II (95-55 гг. до н.э.). Интерпретируя тип оборотной стороны как гора Аргей, Бедукян предположил, что монеты могут быть чеканены в Сезарее Каппадокийской. В CNG 36 (стр. 60) справедливо замечено, что скорее всего изображена гора Арарат. В этом каталоге монеты отнесены к Армении или Коммагене и датированы серединой I в. до н.э. Однако, круговая легенда лицевой стороны, а также изображение реального географического объекта на оборотной стороне характерны для монетной иконографии Рима имперской эпохи. В 2002 г. Музей истории Армении приобрел одну такую монету, найденную в Арташате, легенда оборотной стороны которой полностью сохранена. Единственно возможное прочтение надписи: Λ(υκιος) Α(υρηλιος) Ο(υηρος) ΚΑΙΣΑΡ, что позволяет нам отнести эту эмиссию к Сohему, царю взошедшему на престол Армении в 164 г., после того как полководцы Луция Вера восстановили римское господство в стране. Буква А вероятно обозначает город Арташат.

ARMENIAN COPPER COINS STRUCK UNDER LUCIUS VERUS

RUBEN VARDANYAN

Summary

The coins under consideration present jugate portraits of a beardless king wearing Armenian tiara, and a queen, on the obverse. A Greek circular legend is as yet illegible since on all 10

known specimens it is almost completely off flan. On the reverse, two peaked mountains are represented. There is a Greek semicircular legend above peaks, and the letter A below them. P. Bedoukian has attributed this issue to Tigranes II (95-55 B.C.), interpreting the reverse type as Mount Argaeus and supposing it to be struck at Caesarea of Cappadocia. In CNG 36 (p. 60) is rightly noticed that the reverse type, in fact, represents the Mount Ararat, but this coinage is placed in Armenia or Commagene, and is dated circa mid 1st century B.C. However, the circular legend of the obverse and the representation of a real geographical object on the reverse are rather typical for the coinage of the Roman imperial period. Recently, History Museum of Armenia has acquired a specimen, found in Artashat, the reverse legend of which is wholly legible. The only possible interpretation of this inscription should be Λ(υκιος) Α(υρηλιος) Ο(υηρος) ΚΑΙΣΑΡ, which allows us to attribute this bronze issue to Sohaemos, ascended the throne of Armenia in 164 A.D. after the Roman domination has been reestablished in the country by the generals of Lucius Verus. The letter A probably indicates the city of Artashat.